ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N3

« ՀՀ ԱՆ ՔԿԾ-ՀՄԱ-ԱՊՁԲ-19/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գնահատման նիստի

ք. Երևան 20 նոյեմբերի 2019թ.

Ժամը 11:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Ռուբեն Դարբինյան

Հանձնաժողովի անդամներ՝ Արմեն Հովսեփյան, Հայկ Հովհաննիսյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Հեղինե Թադևոսյան

1. «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ՀՄԱ-ԱՊՁԲ-19/1» ծածկագրով ընթացակարգի հայտերի գնահատման, արդյունքների ամփոփման և պայմանագիր կնքելու մասին.

1.1 ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կարիքների համար անվտանգության ռենտգեն սարքերի ձեռքբերման նպատակով, հրատապ մեկ անձի միջոցով, էլեկտրոնային ձևով կազմակերպված «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ՀՄԱ-ԱՊՁԲ-19/1» ծածկագրով գնման ընթացակարգը www.armeps.am կայքում հրապարակվել է 12.11.2019թ.-ին, ինչպես նաև հրավերը հրապարակվել է www. gnumner.am պաշտոնական կայքում:

1.2 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը բացվել են 2019 թվականի նոյեմբերի 15-ին, Ժամը՝ 11:00-ին www.armeps.am կայքի միջոցով:

1.3 «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ՀՄԱ-ԱՊՁԲ-19/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը հայտերի գնահատման ընթացքում՝ 18.11.2019թ.-ին կայացրել էր որոշում, ըստ որի՝ հիմք ընդունելով Հրավերի 8.9 կետը, քանի որ հայտերի գնահատման արդյունքում Մասնակիցների՝ «ԴԵԼՏԱ ՔՈՆՍԹՐԱՔՇԸՆ» ՍՊԸ-ի և «ԷԼԿՈՄՊ» ՍՊԸ-ի, հայտերում արձանագրվել են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ուստի հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը՝ ծանուցում ուղղարկելով և դրա մասին տեղեկացնելով մասնակցներին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

1.4 Հրավերով սահմանված ժամկետում՝ «ԴԵԼՏԱ ՔՈՆՍԹՐԱՔՇԸՆ» ՍՊԸ-ն և «ԷԼԿՈՄՊ» ՍՊԸ-ն գնահատող հանձնաժողովին են ներկայացրել հայտերում արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ ճտկումներ, որը գնահատվել է կողմից:

1.5 «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ՀՄԱ-ԱՊՁԲ-19/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, ընթացակարգի բոլոր Մասնակիցների հայտերի գնահատման արդյունքում որոշեց՝

1) «ԴԵԼՏԱ ՔՈՆՍԹՐԱՔՇԸՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի շտկված տարբերակը գնահատել բավարար,

2) «ԷԼԿՈՄՊ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հայտի շտկված տարբերակը գնահատել անբավարար՝ տեխնիկական բնութագրի՝ մասնավորապես մատակարարման ժամկետի, անհամապատասխանության պատճառով, որը չի համապատասխանում հրավերի պահանջներին:

3) «Արեմպա Ինթերնեյշնլ» ՍՊԸ ՖՁԸ-ի գնման հայտը գնահատել բավարար, քանի որ ի սկզբանե համապատասխանում էր Հրավերով նախատեսված պահանջներին:

4) «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ՀՄԱ-ԱՊՁԲ-19/1» ծածկագրով ընթացակարգի ՝ N 1 չափաբաժնի մասով, առաջին տեղ զբաղեցրած՝ հաղթող մասնակից ճանաչել **«ԴԵԼՏԱ ՔՈՆՍԹՐԱՔՇԸՆ» ՍՊԸ-ին,**

երկրորդ տեղ՝ ընտրված մասնակից ճանաչել **«Արեմպա Ինթերնեյշնլ» ՍՊԸ ՖԶԸ-ին,** իսկ **«ԷԼԿՈՄՊ» ՍՊԸ-ի** հայտը մերժել:

1.6 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետը՝ հայտարարվում է անգործության ժամկետ 5 օրացույցային օր տևողությամբ, պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության հրապարակման հաջորդ օրվանից հաշված:

1.7 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը (կցվում է):

1.8 «Գնումների մասին» ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն, հրավերով սահմանված կարգով՝ հաղթող մասնակցի հետ կնքել գնման պայմանագիր:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի.

Նախագահ՝ _____ Ռ. Դարբինյան

Քարտուղար՝ _____ Հ. Թադևոսյան

Գնահատող անդամներ՝

1. _____ Ա. Հովսեփյան

2. _____ Հ. Հովհաննիսյան